Հավելված N 2
2024 թվականի հունվարի 22-ին կնքված
1032-11003/24-ԱԾ պայմանագրի

# ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 2

1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի տրամադրում և սոցիալապես անապահով անձանց սննդի կազմակերպում» |
| Դրամաշնորհի N | Լոտ 11. Արարատի մարզ– ճաշարան |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 01.01.2024-31.12.2024թթ. |
| Հաշվետու ժամանակահատված | 01.04.-30.06.2024թթ. |
| Ներկայացման օր | 08.07.2024թ. |
| Հաշվետվության պատասխանատու<br>(անուն, ազգանուն, պաշտոն) | Սիրանուշ Սողոմոնյան<br>Սոցիալական աշխատանքի սուպերվիզոր |

Digitally signed by
MKHITARYAN
YERVAND
2508730335
Date: 2024.07.08
15:33:54 AMST

2. Բովանդակային հաշվետվություն

**2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են.
- սննդի (տաք ճաշի) տրամադրում,
- սոցիալական խորհրդատվություն,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:**

- Սննդի (տաք ճաշ) տրամադրման ծառայության շրջանակներում՝ կազմակերպության նախագահի կողմից հաստատված ճաշացանկով, ճաշարանում շաբաթական 5 օր տրվել է տաք ճաշ, ինչպես նաև սուրճ, միրգ և քաղցրավենիք: Հաշվետու ժամանակահատվածում ծառայությունից օգտվել է 50 շահառու:
- Սոցիալական խորհրդատվության տրամադրման շրջանակներում համակարգող/սոցիալական աշխատողը ճաշարան դիմող անձանց տեղեկատվություն է տրամադրել ճաշարանից օգտվելու կարգի վերաբերյալ, վերահսկել ճաշարան հաճախող շահառուների հաճախելիությունը, ճշտել բացակայությունների պատճառները, անհրաժեշտության դեպքում իրականացրել տնայցեր: Համակարգող/սոցիալական աշխատողը պարբերաբար խորհրդատվություն է տրամադրել շահառուներին իրենց իրավունքների, համայնքում գործող սոցիալական ծրագրերի վերաբերյալ: Սոցիալական աշխատողի կողմից իրականացվել 2 դեպքի վարում՝ վերափաստագրման կազմակերպում, ստացիոնար բուժման կազմակերպում: Հաշվետու ժամանակահատվածում շահառուների հիմնախնդիրների լուծման նպատակով իրականացվել է 16 ուղղորդում, միջամտություն/միջնորդում այլ կառույցներ:
- Այլ ծառայությունների տրամադրում.
  - Հոգեբանական աջակցության կարիք ունեցող 5 շահառուի հոգեբանը ներգրավել է հոգեբանական խմբային հանդիպումներին,
  - Ճաշարանի 10 շահառու մասնակցել է կենտրոնում կազմակերպված հետևյալ միջոցառումներին՝ Սուրբ Ծնունդ, Տյառնընդառաջ, Կանանց միջազգային օր:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

Հաշվետու ժամանակահատվածում համացանցում նյութեր չեն տեղադրվել:

**2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի գործողությունների իրականացմանը խոչնդոտող խնդիրներ չեն առաջացել:

**2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

Հաշվետու ժամանակահատվածում նախատեսվում է շարունակել իրականացվող հետևյալ գործողությունները.

- սննդի (տաք ճաշի) տրամադրում,
- սոցիալական խորհրդատվություն,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:**

Արտաշատ և Մասիս համայնքները սպասարկող թիմի սոցիալական աշխատողները մասնակցել են «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ի կողմից կազմակերպված «Սոցիալական դեպքի վարման մեթոդաբանությունը» թեմայով թրեյնինգին:

Ձևաչափ

ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության ճաշարանի շահառուներին մատուցված ծառայությունների վերաբերյալ

| հ/հ | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 50/50 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 25 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 25 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 12 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | 5 |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 20 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 25 |
| 1.4 | երեխաներ (միայն ճաշարանի պարագայում) | - |
| 2. | մեկանգամյա սննդի տրամադրում | 50 |
| 3. | Այլ ծառայություն (նշել) Միջոցառումների կազմակերպում | 10 |

Կազմակերպության ղեկավար *Երվանդ Միխիթարյան* «08» 07.2024թ

(ստորագրություն, անուն,ազգանուն)